

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար


Տարեկան Ֆրք 10

Վեցամսեայ » 5

ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան Ֆրանք 12

Վեցամսեայ » 6

ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբաթ օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ: Երու քիւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիմ:
Զհրատարակուած գրութիւնը եւ յսրմիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN K. STEPAN

(BULGARIE)

VARNA

ՎԵՅԱՄՍԵԱՅ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Այսօր կ'աւարտի մեր վեցամսեայ ա-
ռաջին շրջանը և 26րդ թիւով կը թեւակո-
խենք միւս նոր վեցամսեին, որ պիտի փակէ
ՀԱՅԵՆԻ ամբողջ մէկ տարուան շրջանը:

Գոհութեամբ կ'արձանագրենք մեր այս
յաջողութիւնը, որ բացօրոշ կերպով ցոյց
կուտայ թէ մեր թերթը իր փոքրիկ ծաւալին
ու չափաւոր պարունակութեանը հակառակ
որքան կրցած է ծաւալ գտնել Պուլկարիոյ
Հայ հասարակութեան մէջ և թէ որքան
կրցած է օգտակար ըլլալ ընթերցումը հան-
րացնելու տեսակետով:

Ինչպէս առաջին թիւով գրած էինք,
մեր ուղղութիւնը եղած է ցարդ ձաղկեղ
մոլորքիւնները՝ յարգելով անձնակա-
նութիւնները, այս ուղղութեամբ անխտոր
ու անսայթաք բաղեցինք միշտ, առանց խը-
նայելու աներես ու անխիղճ եսականութեանց
ու կամայականութեանց, որոնք դժբախդա-
պէս մեծ տեղ ու դեր ունին տակաւին մեր
արդի ընկերական բարքերուն մէջ: Թէեւ գրա-
նուեցան վայրահաջ ու պոռոտացող իմաս-
տակներ, որոնք իրենց անիմաստ ճոճուոցնե-

րով ուզեցին հարուածել մեզ ու վտանգել
մեր գոյութիւնը, բայց մենք արհամարհանքի
և արգահատանքի մուրով օժեցինք անոնց
ճակատը, և աւելի եռանդուն գործունէու-
թեամբ բաղեցինք այն շաւղէն, ուր դրած
էինք մեր առաջին քայլափոխը:

Գալով լեզուի խնդրոյն, մենք ջանացինք
հնար եղածին չափ պարզ ու դիւրհասկնա-
լի դրել, զի գիտէինք թէ մեր ընթերցողնե-
րը զարգացման միւսնոյն աստիճանին վրայ
չեն գտնուիր, մեր իղձն էր ամեն հասակի,
ամեն տեսակի ու ամեն բնակի դիւրամտաչե-
լի ընել մեր թերթը. և ուրախ ենք աւել-
տել թէ մեր վեցամսեայ հրատարակութեամբ
կրցած ենք իրագործել մեր իղձը. մուրթիւնը
ները իրենց իսկական վիճակին մէջ պատ-
կերացնելու և գրութեան մը հանդիսաւո-
րութիւնը չի կորսնցնելու համար ստիպուած
էինք գործածել ժողովրդական լեզուն՝ զոր
մեր ամենէն ուսեալ դասակարգէն սկսեալ
մինչև յետին դասակարգը կը խօսի այսօր
մեր ականջներուն տակ:

Եզրակացնելու համար ըսենք թէ հա-
ճոյալին օգտակարին խառնել, այս ե-
ղած է ցարդ մեր սկզբունքը և այս պիտի
ըլլայ ասկէ վերջն ալ:

Բայց, ինչպէս ծանօթ է մեր ընթերցողներուն, աշխարհի մէջ բան մը չի կայ որ յաջողի առանց քաջալերութեան. բարոյական ու նիւթական աջակցութիւնն. ահա միակ զօրաւոր լծակը որ կարող ըլլայ շարժել ամեն գործ ու յաջողցնել զայն:

Լիալոյս ենք որ ընթերցասէր հասարակութիւնը ինչպէս նախորդ վեցամսէին, նոյնպէս և նոր վեցամսեայ շրջանին առթիւ պիտի փութայ առատաձեռնել իր ամէն կերպ խրախոյսն ու բաջալերը, որոնցմով կարելի պիտի ըլլայ մեզ աւելի հաճոյալի, աւելի զբօսուցիչ և աւելի օգտակար ընծայել մեր թերթը:

””

ԽԱՐՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊՊԵ Ի Կ. ՊՈԼԻՍ)

Այն հետաքրքրական ու ծիծաղաշարժ վէպը, զոր գրաքննութիւնը արգիլեց մեզ հրատարակել Կ. Պոլսոյ մէջ, թէև մտաւիր էինք Պոլսկարիոյ մէջ զատ հատորով մը հրատարակ հանել, բայց մեր Պատուարժան ընթերցողաց խնդրանքին տեղի տալով, որոշեցինք ՀԱՅԵԼԻ միջոցաւ հրատարակել մաս առ մաս, առաջիկայ 26րդ թերթէն սկսեալ:

Պիտի տշխտտինք այս զուարճալի վէպը պատկերազարդ ընել՝ արժանանալու համար ընթերցասէր հասարակութեան կրկնակի քաջալերութեանց: Պէտք է աւելցնել նաև թէ սոյն վէպը զատ չի պիտի տպագրուի, հետևաբար, անոնք որ թերթերը հաւաքելու սովորութիւն ունին, պէտք է ուշադիր ըլլան չի կորսնցնելու, հակառակ պարագային մէջ, խմբագրութիւնն չի պիտի կրնայ կորսուած թերթին տեղ ուրիշ մը զրկել:

ԱԶԳԱՅԻՆ

Սիլիսդրէէն եկած մասնաւոր նամակներէ կը տեղեկանանք թէ Պոլսկարիոյ և Ռուսմանիոյ կաթողիկոսական այցելու հովիւ Գեր.

Տ. Արսէն Վ. Վեհուշի որ այս միջոցս նոյն բաղաբը կը գտնուի, մօտերս պիտի այցելէ ի Բաղարճըդ եւ անկէ պիտի վերադառնայ ի Վասնայ:

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆՔ “ՀԱՅԵԼԻ”

(Պատահական թղթակցէ մը)

Ռուսմուգ, 24 Սեպ.

Քանի մը օրէ ի վեր հոս հասած եմ Ռուսմանիաէն: Հրապարակիս վրայ յուզիչ գէպքի մը տարածայնութիւնը կը շրջի, զոր արժան կը գատեմ տեղեկագրել ձեզ:

Իր անցեալով հռչակաւոր խաչագող, ի Սօփիա, ի Ֆիլիպէ և այլուր պաշտօնափարող և տեսակ տեսակ խաբէրայութիւններ գործող Պուքրէշցի Տէր կարապետ անուանեալն՝ որ վերջերս քահանայի ոով եղած միջոցին քեզս պաշտօնավարեր է եղեր, այս անգամ ալ հետագայ պատմութեան հերոսը կը հանդիսանայ:

Պուքրէշ բնակեալ իր եղբոր աղջկան վերջերս անօրինակ ապականութեանց մէջ գրտնուիլը լսելով, կը դիմէ յիշեալ քաղաքը և կը գտնէ օրը կէս յիշ վիճակի մէջ, զոր հետը հոս բերելով, կը համոզէ Մշիցի Ն. Աւետիսեան անուն գաղթականը՝ որ երկրին մէջ ունեցած կիսն ու զաւակները թողու և այս աղջկան հետ ամուսնանայ, խնստանալով միանգամայն պաշտօնական ձեւակերպութեանց մէջ օգնել իրեն:

Յիշեալ Մշիցին, որ մինչև վերջերս իր հննդավայրին մէջ ունեցած ընտանեաց սիրով կը տոջորի և հանապաղ կը թղթակցի եղեր, այժմ՝ կուրանայ զանոնք ըստ յանձնարարութեան վերոյիշեալ քահանային: Բայց իրողութիւնը յայտնուած է, և անշուշտ պաշտօնական մարմինք պէտք եղած արգելքները պիտի դնեն այսօրինակ գայթակղական ամուսնութեան մը առաջն առնելու համար:

””

Քաճանայութիւնը չի ձգելով նորէն ամուսնանալ ուղող Տէր Ղեւոնդն ալ այժմ Ռուսմանիոյ Պոթուշան քաղաքին մէջ մեքրէս մը առած նստած է և կը զբաղի կէս մը քաճանայութեամբ ու կէս մ'ալ գինեկաճառութեամբ:

Տէր Աթանաոս սրճեփ քաճանայն ալ քաղաքէս հեռացած է, իր հետ տանելով ժողովրդեան մէջ կարգ վէճերու պատճառները:

ՄԻՀՐԱՆ

ՀԱՅԵԼԻ — Փափաքելի է որ Պուլկարական ուրիշ քաղաքներու Հայերն ալ Ռուսմուգցիներուն հետեւելով երես չի տան Եկեղեցւոյ և Ազգին նախատինք եղող այսօրինակ քաճաններուն:

Վառնա 22 Սեպ.

ԱՀԱ ՀԱՅԵԼ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԵՐ

Լօմբալանգաի դէպքը, ապահով եմ, պզգանք և զայրոյթ պատճառած է ձեր բոլոր ընթերցողներուն: Արդարեւ կը պակսին բաւական զօրեղ բառեր, ձողկելու համար այդ կարգի հրէշները, որոնք իրենց անասնային բնազդներուն յագուրդ տալու համար չեն քաշուիր թշուառութիւնը շահագործելէ:

Ասկէց աւելի ստոր և ամօթալի արարք մը երևակայելը անշուշտ անհնարին է: Եւ սակայն այդ չէ՛ ըսելիքս. ձեր թղթակիցը քստմնելի պատմութեան պարագայները պարզելէ ետքը, իր նամակը կը վերջացնէ սա բառերով Ահա Հայը և Հայութիւնը:

Ահա ադ չի հասկցայ:

Կ'ընդունիմ թէ շատ անգամ անհատի մը արարքը ամբողջ ազգի մը պատիւ կամ ամօթ կրնայ բերել, բայց այս՝ այն պարագան չէ, այդ եպերելի ընթացքին հեղինակը ազգին կողմանէ մնանք մը չունէր և ոչ ալ ազգային ո եւ է պաշտօնական մարմին մը կը ներկայացնէր. գռնհիկ սրիկայի դիպմըն է պարզապէս եւ անկէց բխած ցիւնն ու մուրը երբէք Հայութեան վրայ չի կրնար ժայթքել:

2եր թղթակիցը բնաւ օտար թերթեր

թղթատելու առիթն ունեցած չէ՞ և չէ՞ հանդիպած այնպիսի արդարեւ քստմնելի եղերներու, աշխարհի ամենէն քաղաքակիրթ ազգերու կեանքին մէջ, որոնց քով Լօմբալանքայի կնոջ արկածը պարզ խաղալիկ մըն էր, եւ սակայն այդ ազգերը նախատուած չեն այդ ապականեալ նկարագրերուն պատճառաւ:


Եւ յետոյ, եթէ անհատներու վրայէն պիտի չափենք ազգը, ահա քանի մը անբարոյականներու դէմ՝ հաղարաւոր սիրելի դէմքեր, ազգասէրներ, մարդասէրներ, որոնք մէյ մէկ կերպով, անգին ղոհողութիւններով ջանացած են վեր բռնել Հայութեան պատիւը: Ո՛չ միայն Ազգ. արժանապատուութիւնը, այլ եւ արդարութեան զգացումը պարտք չի՞ դնէր մեր վրայ անոնց գործերը ներբողելով արձակենք այդ վճիռը,

Ահա Հայր եւ Հայութիւնը

Գ. — Ա.

ՀԱՅԵԼԻ — Կը թուի մեզ թէ Յարգոյ յօդուածագիրը շատ աճապարանօք ըրած է իր դատաստանը. այս օրինակ քրտմնելի արարք մը, ըլլայ պաշտօնական անձի ձեռքով կատարուած կամ ոչ, իր նշանակութիւնը կը պահէ միշտ. արդէն ամենուն փիտցած բանն է որ, սոյնօրինակ դէպքեր, Բահովայի մէջ կամ այլուր միշտ պաշտօնական անձանց ձեռքով գործուած են, որովհետեւ պաշտօնական անձինք կարող են միայն գաղթականներու հետ այսքան համարձակօրէն յարաբերութեան մտնելու, որոնցմէ մին է նաեւ Բահովայի Ս. Շ: Եւ, եթէ չենք սխալիր, մեր Լօմբալանկայի թղթակիցը «Ահա Հայը եւ Հայութիւնը» բառերով ըսել ուզած է թէ ահա հայը, որ իր արեւնակից հայուն թշուառութիւնն իսկ յարգել չը գիտեր ու անխղճօրէն կը շահագործէ զայն, եւ ահա հայութիւնը, որ իր այս անկեալ կացութեան մէջ ենթակայ է միշտ այսպիսի քստմնելի հրէշութեանց:

Ու յետոյ, քանի որ մեր մէջբարիք գործողներուն չափ չարեր ալ կան, մինակ առաջինները պիտի ներբողենք, Ազգային արժանապատուութիւնը եւ արդարութեան զգացումը պարտք չի՞ դնէր մեր վրայ չարարարներն ալ ձողկելու:



ՎԱՐՊԵՏՈՐԻ ԱՂՋԻԿ ՄԸ

(Շար. եւ. վերջ)

Շիմտի հէր շէյտէն էվէլ կէչինմէմի-
զի տիւշիւնմէլիդ :

— Ադ խուսուսը հիշ վաղիքէ մ'անիր ,
խալիտ պէկին վրայ չորս բեռ մաթլուպս
սանկս թող կենայ , տէֆէրիս միւճիպով վու-
թը բեռ հարուր սէքսէնը հվնգ հալարղը .
նախտ ստակ տ'ըլլայ սնտուկիս մէջ :

— Պիլիրիմ քի չօգ վարիյէթինիդ վէ
նուֆուսունըզ վար , ֆազաթ արթիյէ մալ
կէօզ չըգարմազ եա' :

— Շիտտակ է :

— Բէտէլիմ իլէ պիր կէօրիւշ տէ'
պէնիմ իշիւն պէշ հիւղ լիրա թրաֆօմա իս-
թէ :

— Վախիտէ բէք խայտէլի կու խօ-
րաթիս ըմմա՝ առ իֆատէ արածդ քիւլլի-
յէթի մէպլաղ մի է , մաթլուպ անիմ տը
աղա բէտէրդ չի տայ իսէ ի՞շ տի անինք :

— Սիզ իսթէյին , օ միւճէրրէտ վէրիր ,
էկէր վէրմէզսէն՝ պէն տէ ննշանը կերի է-
տէրիմ , տէրսին :

— Ի՞նչ հիւրըմմեցիր , ի՞նչ , ի՞նչ ,
ադ պօմպակը էնկըճէդ հանէ :

— Ճա՛նըմ , կերի էտէրիմ տէր իսէն
սահիհատէն իթմէյէճէքսին եա՛ , պէօյլէ տէյէ-
ճէք օլուրսան իսթէր իսթէմէզ պէշ եիւղ լի-
րայը վէրիր , պիզ տէ րահաթ կէչինիրիդ :

— Եա վէրմէմ ըսելու ըլլայ իսէ ...

— Տէմէզ . չիւնքի օ վազըթ պէն ա-
եազ պասաճաղըմ քի վէրսին , եօգսա քէն-
տիմի հէլաֆ իտէճէիմ , տէրիմ :

— Վայ խելվիդ պուտուկը սիրիմ ուր ,
մէջը տէրեա ախլ կու վուխտայ :

— Վալիտէմ տէ պանա թարաֆ իտէ-
ճէք տիր , չիւնքի հէլաֆ օլմամը իսթէմէզ :

— Ըմպէս է :

— Շիմտի նասըլ տէտիմ իսէ , էօյլէ
եաբաճաֆմըսն :

— Գիւլուս վրայ էֆէնտըմ , հիշ քու
խօսքդ կօլիւճ մի կըլլայ . հըմայեկս կէհամ
ադ խուսուսին վրայ կու խօրաթիմ :

Ջայս ըսելէ ետքը մնաք բարով ըսելով
կը մեկնի և ուղղակի օրիորդին հօրը խանու-
թը կերթայ :

” ”

— Բարի լոյս էֆէնտըմ , պայվական
քէյֆիկդ :

— Մաշալլահ Գամիանոս աղա , հօշ
կէլտինիդ , պուլուրն :

— Էֆէնտըմ , իգթիղալը մատտէի մը
հըմար եկի ...

— Ինչալլահ խայըր տըր , պուլուրուն ,
սէօյլէին :

— Արսիմ ուր գալիք շաբթու հարսնի-
բըն ընինք լմնցնինք :

— Բէք էյի , սիզ պիլիրսինիդ :

— Վախիտէ թալիւգաթ տըլլինք առա
ըմմէնուն անցած քէօրբիւէն մենք ալ տի
անցնինք , պինաէն ալէյհ՝ հինգ հարուր օսկի
կուղիմ խօրաթըմա :

— Նա՛սըլ , նէ՞ տէտինիդ :

— Խօրաթըմա՞ է , թօրախուժա՞ է , իշ-
թէ ըսել կուղիմ ուր՝ հինգ հարուր լիրա
տի տաք պէր վէշհի բէչին :

— Ֆազաթ , Գամիանոս աղա , էվվէլ-
տէն պէօյլէ պիր սէօզ օլմատը , շիմտի նէտէ՞ն
նէշէթ իտիյօր :

— Խայըր էֆէնտըմ , նէշէթս փախած
չէ իսէ տը՝ մենք ալ առ խուսուսը նոր սոր-
վեցանք :

— Պա՛գ Գամիանոս աղա , պէօյլէ պիր
վազըթտա քիմսէ պէշ եիւղ լիրա չըգարըպ
թրախօմա վէրէմէզ . պախուսուս քի սիղլէր
իլէ պու եօլտա պիր լազըրտը օլմամը տըր ,
շիմտի նէտէ՞ն իճապ էթտի :

— Էֆէնտըմ, հրմայեկս կարճ խօրը-
թա, հինգ հարուր օսկի տի տաք չէ նէ վաղ
տի գամ:

— Պու ագշամ վալիտէսի իլէ կէօ-
րիւշէլիմ տէ՝ եարլն ճէվապընը վէրիւրիզ
օլմա՞զ մը:

— Ես աղէկ գիտիմ ուր տիւտիւ հա-
նումը հինգ հարուրին տեղ հաղար տանք տի
ըսէ, զէօրէ ախշին հանումին վրաս ֆօքի
տալէն մոխուֆ է:

— Հէր նէ հալ իսէ, իճապընա պա-
գարըզ ըսելով կը ճամբէ:

Հեաւեալ առաւօտ Գամիանոս աղան,
օրիորդին հօրը ստորագրութեամբը նամակ
մը կ'ստանայ, յորում, բացէ ի բաց մեր-
ժելով իր առաջարկը, ուրիշ տնգամ իրենց
տունը ոտք չի կոխել կը հրամայէր:

Գամիանոս աղան քանի մը օր ի զուր
սպասելէն ետքը կը հասնայ թէ խաղ մը ե-
ղած էր իրեն, ու թէ եւ կ'ուզէ խնդիրը
Մագթաղինէի ծնողացը պարզել, բայց կար-
ծելով որ այդ աղջկան հետ եթէ ամուս-
նանայ՝ թերեւ հանգստութիւն չունենայ,
ուստի ձայնը քաշելով տեղը կը նստի:

Ահաւասիկ օրիորդ Տիրուհիի խորա-
մանկութեամբը այս անյարմար ամուսնու-
թեան առաջը կ'առնուի, ապա թէ ոչ՝ նոյն
տան խաղաղութիւնը անպատճառ պիտի խան-
գարուէր, որուն զինականները շատ անգամ
կը տեսնենք:

Պատճէն Ուղերձի ընթերցողաց Հայ-
կական Մատենադարանին Վառնայի, մա-
տուցեալ առ կազաշնորհ ազգայինս, յամի
Տեառն 1897 յամսեանն Սեպտեմբերի 22:

Սիրելիք մեր ի Տէր,

Ստորագրեալ ընթերցողքս խեղճ ու կը-
րակ ընթերցարանիս Վառնայի, լուեալ զի
շնորհեալ իցէ ի ձէնջ սնտուկս երկուս կազս
Պաթումականս, վասն լուսաւորելոյ զգնդա-


նացեալ եւ ոստայնօք ծածկեալ զընթերցա-
րանն մեր, որոյ պատք ելին ի լեզու եւ ա-
ղաղակէին թէ «Զիա՞րդ խաւարն եւ մուծն
պատեալ պաշարէ զմեզ,» ներկայիս փու-
թամբ յայտնել զանսահման շնորհակտու-
թիւն Չերումզ մեծապատուութեան եւ զան-
ծայրածիր երախտագիտութիւն սրտից մերոց
բաբախելոց, վասն բարօրութեան եւ արեւ-
շատութեան ձերոյ: Թէ եւ կոհակք փրփրա-
դէզք եւ լեռնակուտակք բացեալ երախտ
իւրեանց ի մի ուսկ ընկլուզին զչուխտս սրն-
տուկս կաղիցդ Պաթումականացդ, այլ բա-
ջայոյս եմք զի շնորհօք փութաջան վարչու-
թեան գումբանեալիցն տալիք ճակնաց, ընդ
հուպ ազատել փրկեսցին յարշաւանաց բա-
լամտից եւ խըլլճ պալլիսոցն Պոնտոսի. որոյ
են փառք յաւիտեանս ամէն:

Ստորագրութիւնք

Ծ . Կ .	Ք . Մ . Ջ .
Գիտողեան	Ինճէսագեան
Յ . Բ . Կ .	Ծ . Խ .
Ետքը տեսնուինքեան	Գաջա պուլսանեան
Բ . Ի . Բ .	Գ . Ս
Տատանմըշեան	Գարըշմաղեան
Ճ . Պ .	Չ . Բ .
Տօգանմայալմեան	Աւելիեան
Մ . Կ . Է .	Թ . Բ .
Մարանկօղեան	Չիվախցողեան
Հ . Ս .	Ք . Ս .
Տեղ չի գնացեան	Աշըրալմեան
Յ . Մ .	Դ . Շ .
Դողացողեան	Պալթայը վուր-
Ջ . Մ .	տուգեան
Բատրմանեան	

Յաղագս իսկականին յար եւ նման լի-
նելոյն՝ ստորագրեմք եւ մեք,

ԲՈԺՈԺԻԿ



ԳՐԱՆԱՆ

—o—

ՄԻՆԱԿ ՊՏՏԱԾ ԱՏԵՆՍ

Ինչ որ է եփթնի մը համար—որուն անուշահոտութիւնը զգալու եւ վայելելու համար քիչ մը հեռուէն պէտք է հոտուրտալ—նոյնն է նաեւ կնոջ համար, պէտք է անկէ հեռու մնալ, անոր հրապոյրովն յափշտակուած մնալու համար:

Գարնան աղւոր գիշեր մը երբէք բնութեան ականատես եւ ականջալուր եղած էք առանձնացեալ. պիտի լսէք այն ատեն նորարոյս տէրեւներուն մեղմ սարսուռը, որ փախստեայ համբոյներու խորհրդաւոր ներդաշնակութեան կը նմանի, կամ տեսակ մը ժրմունջ, շշուկ մը, փսփսանք մը, որ սուրբ սիրոյ մը լուռ խոստովանութեան կը նմանի:

Վայրկեաններ կան, որոնց մէջ ինքզինքնիս երջանիկ կը կարծենք: Օր մ'ալ սակայն ցաւով կը Հասկնանք թէ ճիշդ այդ երջանիկ կարծուած վայրեաններուն մէջ է եղեր ուր ամենէն դժբաղդ էակներն ենք եղեր:

Ամեն անգամ որ պտուղի մը արտաքին տեսքէն, վառ գոյնէն շլացած խաճնելով կը տեսնեմ անոր փտած միջուկը, կը խորհիմ այն էրիկ մարդոց վրայ, որոնք իրենց փայփայիչ լեզուաւ խեղճ աղջիկները կը զգլխեն, կը թշուառացնեն. ու այն ատեն կառնեմ այն արտայայտութիւնը զոր դէմքս կ'ստանայ՝ այդ պտուղին բերնիս մէջ գտնուող ծամուելու պատրաստ մասը դուրս թքած տեսնալ:

Այն, ժպիտ մը կայ որ երջանկութեան մը պէս թրթռուն, հառաչանքի մը պէս տրժգոյն եւ երազանքի մը պէս մեղամաղձիկ է:

ԲԱՒԷԼ

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ

Ժանգոտած դգալ, դանակ եւայլք

Ասոնք քիչ մը ժամանակ քարիւղի մէջ ձգելէ ետքը խցանով (մանթար) կամ լաթով մը սրբէ: Դիւրաւ կը մաքրուին:

—o—

Սեղանի զանակները փայլեցնել

Փայտածուխի խիստ բարակ (մաղուած) փօշիով եթէ զանակները շփուին՝ (առանց ջուր դպցնելու) սքանչելի փայլութիւն մը կ'առնուն:

—o—

Ոսկեզօծ շրջանակները ճանճերու աղբէն մաքրել

Վրձինով կամ սպունգով մը՝ արտաւորեալ շրջանակներն քացախով օժէ, յետոյ ջրով լուսաւ մեղմ ջերմութեան մէջ դիր որ ինքնիրեն չորնայ:

—o—

Թղթի վրայէն իւղի բիծը մաքրել

Թղթին իւղոտած մասին վրայ քիչ մը պէնզիկ լեցուր, եւ երբ թուղթը ղայն ծծէ վրան տաշած կաւիճ ցանէ, վայրկեան մը ետքը երբ փոշին թոթուես, արտաւոր կորսուած պիտի տեսնես:

ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ

Մարտէն Ասլանի

Հին Գաղարմային դիմացը թիւ 218

Այս անգամ Եւրոպայէ բերել տուած նոր մեքենաներով ընտիր լուսանկարներ կը պատրաստէ, գոհացուցիչ գինով: Յաճախորդք գոհ պիտի մնան:





Բարի իրիկուն խաչիկ աղան դեռ չեկա՛ւ :

— Անիկայ երեք ամիս է գիշերօթիկ գրուեցաւ .

— Ի՞նչ կըսէք . . . ո՞ր դպրոցը կերթայ .

— Հաճի Տիմիթրիին խօլթուիսը :

— Պապաճըղըմ, պանա պիր տափուլ ալը՞ր ժըսըն .

— Խայըր :

— Նիշի՞ն ալմազըն . 3 կիւն տիր ուսըու տուրոյօրըմ .

— Էյի ամա՛ տափուլու վուրուպ՝ բա-
թըռտը չըգարաճագսըն վէ պէնի թաճիկ
իտէճէքսին :

— Էյլէ իսէ՛ սէնին ույուտուղուն վա-
գըթ վուրուրում :

— Պիր եաղմուրլու կիւնտէ խրսըզըն պի-
րի՛ քէնտի օղլու իլէ կաղինճըն պիրինտէն
իշէրի կիրիպ օթուրուրտուղունտա , օղլու
սօրար .

— Պապա՛ , սէնտէ պիր ֆինճան գա՛հ-
վէ ալսա՞նա .

— Խայըր օղլում . պէն պիր գաշըգ ա-
լաճաղըմ :

— Նէ՞ տալմըշ տիւշիւնիւեօրսըն Տիրատուր
ողա .

— Նա՞սըլ տիւշիւնմէիմ՝ գա՛րտաշ , էվ

սա՛հիպի կէլիրսէ նէ՞ տէմէլի , տարակուսանք
պաշըմը ալաը :

— Ատամ սէնտէ , ճանընը վէրէճէք
տէյիլսին ա՛ , բարամ եօգ , օրթալըգ իշթէ
պէյլէ տէրսին՝ պիթէր կիտէր :

— Օրասը էյլէ ամա՛ հէր վագըթտա
պիր պիշիմ՝ ճէվապ էյի գաշմայօր :

— Էհ , էյլէ իսէ՛ կէլտիղինտէ , « սիղէ
հէր վագըթ բարամ եօգ տէյօրտըմ իսէ աէ՛
ալֆ իտէրսինիկ պու կիւն տէ բարամ գալմա-
տը տէյէճէիմ » տէրսին :

— Էյ իքիսի պիր լաղըրտը օղաու ,

— Նէտէ՞ն պիր լաղըրտը օղայօր , « Եօգ »
եէրինէ « գալմատը » աէյէճէքսին :

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 23


Տակաւին լուծուած չէ , նուէրն է Եր-
գարան մը :

— 0 —

Թիւ 24 Հանելուկն էր ԹՈՒՂԹ :

Ռուբէն Համբարձումեան

ԶԲՕՍԱՆՔ



Որսի շունը , բայց ո՞ր է տէրը :

ԱԶԴ

100 Այցաբարտը երկու Ֆրանքի կը տպագրուին: Դիմել «Հայկի» խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարին ծախք 30 սանգիմ յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանգիմնոց նամակադրօ՞ւմ կրնդունուի:

—o—



ԿԱԼՎԱՆԻՍԹ



Ամեն տեսակ տպագրական կաղապարներ պատրաստող, նաեւ անձնական եւ թէ՛ առեւտրական կնիքներ: Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երեւցած քառաչուէ կնիքներէ աւելի դիմացկուն են եւ դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ քառաչուի գինէն տարբերութիւն չունի: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Դիմել ի Վառնա Չիլինկիրէր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:

ՏՕՔԹ. Ի. ԹՈՎԽԱՍԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ վերադարձած է Սօֆիան եւ կընդունի հիւանդներ ամէն օր իր տունը ի Պալլադ Բարար, առաւօտան ժամը 10էն 12, իսկ կէս օրէն վերջ 2էն 5: Չորեքշաբթի օրերն կէս օրէն վերջ ժամ 2էն 5 ձրիապէս կը դարմանէ:

Այցեւորման հասցէտոմս. նամակագրուիս, հրապարատոմս, բարենիշ, տոմոսի, եայլն եայլն թէ՛ պարզ եւ թէ՛ ոսկեզօծեալ սէկ քանի գոյներով կը տըպագրուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խըմբագրութեան:

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

(ՊՈՒՆԱԿԱՐԻՊ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ Ե Բ. Է. ԲԱՆՉՈՒՓ

Վառնա 5րդ թաղ ելտըղ Թապիա

Ամէն տեսակ մեքենաներու. շինութիւն եւ նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով եւ թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շոգեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթ այ գործիքներ, դրամական գասաններ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ եայլն եայլն կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ գոհ մնացած են սոյն գործարանի շինութիւններէն:

—o—

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՍ

ՀԱԻԱՔԱՄԾՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԴ. ԵՐԳԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

ԴԻՆ 2 ՖՐԱՆԿ

—o—

Սոյն երգարանը որուն անհամբեր կ'սպասուէր ժամանակէ մ'ի վեր, 216 էջերով, մեծ խնամքով սրբազրուած, բաց ի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաեւ լողմանութիւն նոր երգեր:

Փափաքողք պէտք է դիմեն առ Մ. ԽԱԶԻԿԵԱՆ՝ Արեւելեան տպարան, 2րդ. Ուչասթ թիւ 1104 ՎԱՌՆԱ. Վառնայէ դուրս եւ օտար երկիրներէ պահանջուածներուն իւրաքանչիւրին վրայ պէտք է աւելցնել 20 սանթիմ իբր բօսթայի ծախք:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Ռուսճուգ	Տիարք Եղբարք Սարաֆեան:
Սիլիսդրէ	Տիար Արթուր Սարգսեան:
Հսամլա	Յովհաննէս Մաճարեան:
Սօֆիա	Յակոբ Ծերունեան:
Լոնտոն	Հայկ Աստուածատուր:

Отговоренъ-редакторъ: Н. Драгулевъ
Печатница «Взаимность» — Варна.